ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ Տ. Տ. ՎԱԶԳԷՆ Ա-Ի ԽՕՍՔԸ ԵՐԵՒԱՆԻ ՀԵՌՈՒՍՏԱՑՈՅՑԻՑ «15 ՕՐ» ՀԱՂՈՐԴՈՒՄԻՆ 1989 ԹՈՒԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 21-ԻՆ

— Մինչև մեր հարցազրույցը սկսելը, ես ուզում եմ շնորհակալութիւն յայտնել, որ Դուք համաձայնեցիք մասնակցել «15 օր» հեռուստատեսային ծրագրին և հրաւիրել «15 օր» ծրագրի նկարահանող խումբը Ձեր Վեհարանը, որտեղ էլ տեղի կ'ունենայ մեր զրոյցը: Վերջին մեր մի քանի ծրագրերում, մի քանի հաղորդումներում ելոյթ ունեցան Հայկական Առաքելական Եկեղեցու թեմերի առաջնորդները: Ինչպէ՞ս Դուք վերաբերուեցիք այդ ելոյթներին:

— Այո, ես բոլորն էլ լսեցի և գոհ մնացի, նախ, որ Դուք տրամադրել էիք այդ հաղորդումները նաև մեր հոգևորականներին: Դա նոր երևոյթ է և ողջունելի: Իմ գոհունակութիւնն եմ ուզում յայտնել ընդհանրապէս հեռուստացոյցի ղեկավարութեան և անձնապէս Ձեզ: Շատ լաւ է և յոյս ունեմ, որ կը շարունակուի: Մենք ասելիքներ կ'ունենանք տակաւին:

— Վեհափառ Տէր, Դուք ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ ընտրուեցիք և մասնակցեցիք դեպուտատների առաջին համագումարին: Համագումարից յետոյ մամուլում կամ հեռուստատեսութեամբ դեռ ելոյթ չէք ունեցել: Սա ըստ երևոյթին առաջին հնարաւորութիւնն է, և ես կը ցանկանայի, որ Դուք Ձեր տպաւորութիւնները կիսէիք համագումարի վերաբերեալ:

—Այս մեծ համագումարը բացառիկ երևոյթ էր Խորհրդային Միութեան մէջ, կարող եմ ասել բախտորոշ դեր ունեցող: Եւ նրա նշանակութեան կամ գործունէութեան մասին շատ խուսուեց և՛ մեզ մօտ, և՛ արտասահմանի օտար մամուլում: Մի քիչ հետևում եմ ես, և հետաքրքրական էր նաև այն կողմից դիտուած՝ արտասահմանից դիտուած: Իրապէս շատ ասելիքներ կան այդ մասին, նայած թէ ինչ տեսանկիւններից ենք մօտենում համագումարին: Ես այդ բոլորի մասին չեմ մտածում հիմա արտայայտուել, բայց երկու տպաւորութիւններ յատկապէս ուզում եմ հաղորդել ձեզ և ձեր միջոցով հեռուստադիտողներին:

Առաջին. ես գոհ մնացի, որ հայ պատգամաւորները, դեպուտատները, բոլորն էլ մտածում և գործում էին միասնաբար, որպէսզի կարողանան

արտայայտել իրապէս մեր ժողովրդի բաղձանքները, իղձերը: Իմ կարծիքով, այդ ստացուեց: Ապացոյց՝ ելոյթները՝ Վիկտոր Համբարձումեանի, Սուրէն Յարութիւնեանի, Սերգէյ Համբարձումեանի և միւսների, որոնք հայ ժողովրդի արտից խոսող հարցերի մէջ, գրեթէ նոյն մտածումներով, նոյն պահանջներով ա՛րտայայտուեցին, Ղարաբաղի հարցի շուրջը, ամէն մէկը տա՛րբեր բանաձևումներով, բնական է, բայց հիմնականում բոլորը պաշտպա՛նեցին արցախեան դատը, որպէս արդար ու սահմանադրական, որ պէտք է լուծուի համաձայն ազգութիւնների ինքնորոշման իրաւունքի: Այդ, կարծում եմ դրական երևոյթ էր և մխիթարական բոլորիս համար: Ես վստահ եմ այլապէս, որ այժմ մեր հայրենի պետութիւնը և մենք բոլորս, մեր ժողովուրդը, կանգնած պիտի մնանք այդ ուղիղ հիմքերի վրայ, այն է՝ ազգամիջեան հարցերը լուծուեն ազգութիւնների ինքնորոշման հիման վրայ:

— Ձերդ Սրբութիւն, ես համաձայն եմ իհարկէ Ձեր ասածներին և իսկապէս դա այդպէս պէտք է լինի, բայց ներկայ վիճակը Հայաստանում, Անդրկովկասում լրիւ հակառակն է:

— Այո, այդ ցաւալի է: Երևի, ուղիղ չի հասկացում այս արդար սկզբունքը: Խորհրդային Միութեան հիմքում ընկած է ազգութիւնների հաւասարաշխութեան սկզբունքը, ինտերնացիոնալ ոգին: Բայց այդ ինտերնացիոնալ ոգին ինքն էլ իր հերթին անհրաժեշտօրէն հիմնուած է, իմ կարծիքով, ազգութիւնների ինքնութեան և ինքնորոշման սկզբունքի վրայ: Որով պաշտպանել ազգութիւնների ինքնորոշման իրաւունքը, կը նշանակէ պաշտպանել Խորհրդային Միութեան կազմաւորման ինտերնացիոնալ հիմունքը: Կարծում եմ, որ Հայաստանը իր պետական օրգաններով, ներկայացուցիչներով և մեր ժողովուրդը ամբողջ պէտք է կանգնած մնայ այդ ուղիղ և դեմոկրատական հիմքի վրայ, ողջամիտ հաւասարակշռուած ձևով:

Երկրորդ, իմ տպաւորութիւնը, որ ես նոյնպէս կարևոր եմ նկատում, այն է, որ համագումարի ամբողջ ընթացքում ոչինչ չթաքցուեց, ամէն ինչ բացայայտուեց, բոլոր խօսք առնողները խօսում էին համարձակութեամբ, անկաշկանդ և երբեմն նոյնիսկ սուր քննադատութիւններով ոչ միայն անցեալի վերաբերեալ, այլ նաև մեր օրերի կացութիւնների նկատմամբ: Անցեալում էլ, յատկապէս անձի պաշտամունքի շրջանում, խօսուել էր սոցիալիզմի կառուցման մասին, որով այն ժամանակ փորձ կատարուեց սոցիալիզմ կառուցելու, փաստօրէն ոչ միայն արդիւնքի չհասաւ, այլ բոլորովին ծխտումը եղաւ, իմ կարծիքով, ընկերվարական ուղիղ հասկացուած մարդկայնական սկզբունքների: Ես իմ ուսումով բաւական ծանօթ եմ ընկերվարական գաղափարախօսութեան: Ի նկատի ունենալով այդ գաղափարախօսութեան զարգացումը վերջին երկու-երեք դարերի ընթացքում, սկսած Անգլիայից, որ յետոյ Ֆրանսիայում տարածուեց, ապա Գերմանիայում, աւելի ուշ՝ Ռուսաստանում, կարող եմ ասել, որ այն մեթոդները, որով փորձուեց կառուցել ընկերվարութիւնը անձի պաշտամունքի շրջանին, փաստօրէն նոյնքան հեռու էին իսկական, հոյսմանիստական դէմք ունեցող սոցիալիզմից, ինչքան, օրինակի համար, Եւրոպայում միջին դարում ինկվիզիցիան հեռու էր եղել Քրիստոսի Աւետարանից: Կը մնայ մաղթել, որ այն ընթացքը, որ նոր սկսել է Խորհրդային Միութեան մէջ, պերեստրոյկայի, դեմոկրատիզացիայի ճշմարիտ ընկերվարական մեթոդների գործադրումով, իր շինարար դրական վախճանին հասնի: Ինձ թւում է, թէ պե-

ռեստրոյկան կարելի է հասկանալ որպէս սոցիալիզմը կառուցելու մեթոդների վերակառուցում:

Գուցէ ինձ լսողներից ոմանք, մանաւանդ մեր հաւատացեալներից, մտածեն, որ Կաթողիկոսը ինչո՞ւ է սոցիալիզմով զբաղւում: Գիտէք, ես սոցիալիզմի հարցերին մօտենում եմ նաև իբրև քրիստոնեայ, որովհետև սոցիալիզմի, իսկական սոցիալիզմի գաղափարախօսութեան հարազատ իդէալները, կարևոր չափով, համընկնում են քրիստոնէութեան գաղափարախօսութեան հետ: Այդ հաստատելու համար պէտք է ուշադիր կարդալ Քրիստոսի Աւետարանը, պէտք է կարդալ Նոր Կտակարանում Պօղոս Առաքեալի թղթերը և առաջին չորս-հինգ դարերի քրիստոնեա մեծ հեղինակների գործերը, որոնց մէջ հստակ կերպով սոցիալիզմի իսկական գաղափարները կան՝ մարդու իրաւունքների մասին, մարդկանց հաւասարութեան մասին, ազգերի միջև անխտրականութեան մասին ու ընկերային արդարութեան մասին: Այս բոլոր հարցերը շատ հստակ և ուժգին կերպով պատկերուած են այդ չորս-հինգ դարերի արևմուտքի և արևելքի եկեղեցական հայրերի կարևոր գործերում: Որով նաև իբրև քրիստոնեա կարծում եմ, որ ուղիղ և արդար է, որ իսկական վերակառուցումը հնարաւոր լինի կատարել խորհրդային երկրում, այդ ճշմարիտ մարդասիրական հիմքերի վրայ, ընդհանուր Խորհրդային ժողովուրդների եղբայրական ընտանիքում: Գոնէ մեր իդէալը այդ պէտք է լինի, կարծում եմ:

— Բայց որը, ցաւօք, այսօր մնում է միայն ...

— Գուցէ ամման թերութիւններ են սկզբնական շրջանի, որովհետև ուրիշ ասպարէզներում էլ, մանաւանդ հասարակական, քաղաքական կեանքում, հեշտ չէ, որ արագ կարգաւորուեն բոլոր հարցերը, բոլոր զարգացումները և իրենց հստակութիւնը գտնեն: Երևի համբերութիւն պէտք է ունենանք, մի քիչ էլ քաջութիւն և մանաւանդ լաւատեսութիւն:

— Վեհափառ Տէր, իրողութիւնը, որի մասին Դուք խօսեցիք, իհարկէ անչափ կարևոր է, մենք այդ գիտակցում ենք, սակայն, պէտք է նշել, որ այն սակաւաթիւ է, ինչպէս, որ շատ քչերը հնարաւորութիւն ունեն կարդալու այդ գրքերը: Եւ յայտնի է, որ Հայաստանի հրատարակչութիւնները դեռ չեն ծրագրում տպագրել Աստուածաշունչը և Նոր Կտակարանները, ինչպէս նաև այլ եկեղեցական, կրօնական գրականութիւն: Իսկ ի՞նչ կարող է անել Սուրբ Էջմիածնի տպարանը այս հարցում:

— Մենք տակաւին բաւարար չափով նման գրականութիւն չունենք մեր ժողովրդին բաշխելու համար: Իմ կաթողիկոսութեան շրջանին, վերջին 25 տարիների ընթացքում, երեք անգամ տպեցինք Նոր Կտակարանը քսանական հազար տպաքանակով: Բայց շատ արագ սպառուեց, հիմայ բնաւ չունենք գրեթէ: Այժմ մենք ձեռնարկել ենք Սուրբ Գիրքը, ամբողջ Աստուածաշունչը թարգմանել՝ Երևանում այսօր խօսուող հայերէն լեզուով: Արդէն չորս տարի է, աշխատում են, մեծ մասամբ Երևանից մասնագէտներ, գրաբարագէտներ, Մատենադարանից հիմնականում, մեր մի քանի հոգևորականների գործակցութեամբ: Արդէն թարգմանութիւնը վերջացել է և խմբագրութեան գործն էլ նոյնպէս: Յաջորդ տարի, կարծում եմ, կարող ենք տպագրութեան գործին անցնել: Բայց նաև ուրիշ գրականութիւն մենք պետք է պատրաստենք տպել: Փոքրածաւալ գրքեր, որոնք մենք կոչում ենք «Քրիստոնէական», որտեղ պարզ և հասկանալի բացատրութիւններ են

արուած քրիստոնէական կրօնքի, հիմնական դրոյթների, պատգամների, խորհուրդների մասին: Օրինակ, մի նման գիրք ես Բուխարեստում էի կազմել, երբ նոր հոգևորական դարձայ, 1943 թուականին, պատարագի բացատրութիւնը, պարզ, ժողովրդական լեզուով: Վերջերս այստեղ վերահրատարակեցինք ութ հազար օրինակ, անմիջապէս սպառուեց, վերստին պէտք է տպենք: Մենք աւելի լայն ծրագրեր պէտք է մշակենք, հրատարակելու գրականութիւն նաև մեր հին պատմիչներից, մեր հին եկեղեցական հեղինակներից, որոնք ծանօթ չեն մեր ժողովրդին:

— Վեհափառ Տէր, ես Ձեզ կը խնդրէի համառոտակի ներկայացնել Հայ Եկեղեցու արդի վիճակը և մօտակայի ծրագրերը:

— Մեր Եկեղեցին մեր օրերին վերազարթոնք է ապրում: Արցախեան փոթորկումից յետոյ մենք տեսնում ենք հոգեկան մխիթարութեամբ, նոյնիսկ մի քիչ զարմանքով, թէ ինչպէս յեղաշրջուեց մեր ժողովրդի հոգեկան աշխարհը և ազգային գիտակցութեան ու զգացողութեան զարթօնք ապրեց, իր ինքնութիւնը գտնելու, ինքն իրեն աւելի լաւ հասկանալու իմաստով: Սա սքանչելի երևոյթ է: Անկախ, թէ ինչպէս պիտի լուծուի Ղարաբաղեան արդար հարցը, սա նկատում եմ ես մեծ իրադարձութիւն, իսկական մի պայծառակերպում հայ ազգային ոգեկանութեան, նաև կրօնական իմաստով: Անհաւոր աղէտից յետոյ, տեսնում ենք մեր աչքերով, մեր ձեռքերով շոշափում, թէ ինչպէս մեր ժողովուրդը, յատկապէս աղէտեալ շրջաններում դիմում է դէպի եկեղեցի իբրև յոյսի և մխիթարութեան աղբիւր: Ես երբ Նիւ Եորք էի այս փետրուարին, օտար մի թղթակից հարցրեց ինձ, թէ այս երկրաշարժը, որ բազմահազար զոհեր տուեց, արդէօք ժողովրդի մէջ յառաջ չբերե՞ց հակակրօնական զգացմունք, թէ ո՞ւր է Աստուած: Ես պատասխանեցի՝ ձեր հարցումը տրամաբանական է գուցէ, բայց իրողութիւնը այն է, որ ընդհակառակը, հենց այս դժբախտութեան օրերին, աղէտեալ ժողովուրդը կարոտ է հոգևոր մխիթարութեան, որով մեր Եկեղեցւոյ առջև դրուած է մեծ գործ, մեծ պարտականութիւն, պատասխանելու այդ ապաստանին, մեր ժողովրդի հրաւէրին, որպէսզի կարողանանք իրապէս նրանց բաշխել աւելի յոյս, աւելի մխիթարութիւն, աւելի լաւատեսութիւն, աւելի ինքնավստահութիւնը և աւելի հաւատ դէպի բարօր ապագայ:

Անցեալում, մանաւանդ 1930—39 տարիներին մեր Եկեղեցին էլ ծանր օրեր ապրեց: Փակուեցին գրեթէ բոլոր եկեղեցիները, հոգևորականութիւնը հալածուեց, շատերը աքսորուեցին, ուրիշներ ստիպուած ասպարէզից հեռացան: Անմխիթար վիճակի մատնուեց նաև Սուրբ Էջմիածինը և վշտալի Խորէն Մուրադբէկեան կաթողիկոսը իր աչքերը փակեց ողբերգական պայմաններում:

Կացութիւնը սակայն զգալի չափով բարելաւուեց հայրենական պատերազմից յետոյ և մանաւանդ 1955 թուականից սկսեալ, Մեր գահակալութեան շրջանին: Ես երևի պէտք է նկատեմ բախտաւոր կաթողիկոս, որ աւելի նպաստաւոր պայմաններում կարողացայ վերաշինութեան բաւական լայն գործ ծաւալել, թէ եկեղեցիների վերաշինութեան իմաստով, թէ հոգևոր-կրթական իմաստով, այն, ինչ ծանօթ է բոլորին: Վերջին տասնամեակներին բազմաթիւ վանքեր ու եկեղեցիներ վերաշինուեցին ու բարեզարդուեցին, որոնք եկեղեցւոյ իշխանութեան ներքև էին գտնուում:

Եկեղեցաշինական իմ գործունեութեան ճանապարհին, մեծապէս օգտակար եղաւ Մայր Աթոռիս կողքին կազմուած ճարտարապետների և ար-

ուեստագէտների Յանձնաժողովը, սկսած 1956 թուականից տևապէս մինչև այսօր, նախագահութեան ներքոյ ճարտ. Միքայէլ Մազմանեանի և նրա մահից յետոյ ճարտ. Վարազդատ Յարութիւնեանի:

Այսօր, պերեստրոյկայի շրջանին, առաւել ասպարէզ բացուեց մեր առաջ: Դուք երևի լսած կը լինէք, որ Մոսկուայի պատկան իշխանութեան կողմից պատրաստուած է մի նախագիծ խղճի ազատութեան մասին: Առաջին անգամն է, որ Խորհրդային Միութեան մէջ այդպիսի օրէնք պիտի հրատարակուի: Սահմանադրութեան մէջ, ճիշտ է, կար այդ սկզբունքը, խղճի ազատութեան, բայց դա, տեսական յայտարարութիւն էր, յատուկ օրէնք չկար պետութեան և Եկեղեցու յարաբերութիւնները ու Եկեղեցու գործունէութեան պայմանները ճշտող: Շատ կարևոր նորութիւն է, որ նոր նախագծով Եկեղեցին հռչակուում է իրաւական անձ: Դա սկզբունքային մեծ նշանակութիւն ունի: Վերջին ամիսներին շուրջ 14 նոր վանքեր, եկեղեցիներ բացուեցին Հայաստանում և Արցախում: Արցախում՝ երկու վանք և երեք եկեղեցի արդէն գործում են: Հոգևորականներ ենք ուղարկել, եպիսկոպոսն էլ ապրում է Ստեփանակերտում: Բոլորն էլ լաւ են աշխատում, եռանդով ու ոգեշնչումով: Ժողովուրդն էլ շրջապատում է նրանց սիրով: Հարիւրաւոր մկրտութիւններ են լինում: 1932 թուականից ի վեր ոչ մի եկեղեցի չէր գործում ամբողջ Լեռնային Ղարաբաղում:

Յառաջիկայ ամիսներին ևս 15, գուցէ աւելի եկեղեցիներ, վանքեր պիտի վերաբացուեն: Սպիտակում եկեղեցի չունենք, սակայն ծրագիր կայ կառուցել մէկ յիշատակի եկեղեցի, ամբողջ այդ շրջանի նահատակուածների յիշատակին նուիրուած, այդ գործը պիտի կատարուի յառաջիկային:

— Ձերդ Սրբութիւն, շուտով նշուելու է Հայկական Առաքելական Եկեղեցու 1700-ամեակը: Այդ կապակցութեամբ մի քանի խօսք:

— Այո, Դա շատ մեծ ծրագիր պէտք է լինի մեզ համար: Անձնապէս ես չեմ ապրելու անշուշտ մինչև այն ժամանակ, սակայն ծրագիրը հիմակուանից պէտք է պատրաստենք: Մենք որոշել ենք այս աշնան հրաւիրել արտասահմանից մեր բոլոր եկեղեցական կենտրոններից կարևոր ղեկավարներ ու ներկայացուցիչներ, խորհրդակցելու և կազմելու համար ամբողջական ծրագիրը մեր Եկեղեցուոյ հիմնադրութեան և պետական Եկեղեցի հռչակման 1700-ամեակին նուիրուած: Կարևոր հին գործեր պէտք է վերահրատարակուեն աշխարհաբար լեզուով: Այդ աշխատանքին ակտիւ մասնակցութիւն պիտի բերի նաև Երևանի Մատենադարանը: Մատենադարանը անկախ մեր ծրագրից, ինքն էլ չորս-հինգ պատմական, եկեղեցական, մատենագրական գործեր պիտի հրատարակի, նուիրուած մեր Եկեղեցու 1700-ամեակին: Հայաստանեայց Եկեղեցու հռչակումը իբրև ազատ և պետական կրօնք Հայաստանում, սա համաշխարհային երևոյթ է, ոչ միայն զուտ ազգային: Որովհետև համաշխարհային հորիզոնի վրայ առաջին անգամն է, որ քրիստոնէութիւնը պետական կրօնք է հռչակուել: Քրիստոնէութիւնը տարածուել էր ամբողջ Հռոմեական կայսրութեան մէջ, բայց շատ անգամ հալածուած և արգիլուած, նահատակութիւնների 300 տարիների պատմութիւն կայ, ինչպէս գիտէք: Հռոմէական կայսրութիւնը տասը տարի յետոյ, 313 թ. Միլանօ քաղաքում Կոնստանդին կայսրի հրովարտակով, քրիստոնէութիւնը հռչակուեց ազատ կրօնք, թոյլատրուած կրօնք, բայց ոչ պետական և ինքն էլ՝ կայսրը չմկրտուեց: Նա մկրտուեց տասը տարի յետոյ: Մինչդեռ Հայաստանի պարագային, ճիշտ է, Հայաստանում էլ քրիստոնէութիւնը շատ ան-

գամ հալածուած է եղել, յատկապէս 3-րդ դարի վերջերին, հետևելով Հռոմէական կայսրութեան քաղաքականութեանը, բայց 301 թ. քաղաքական և այլ հանգամանքների բերումով և Գրիգոր Լուսաւորչի գործունէութեամբ, Տրդատ թագաւորը, որը հալածող էր եղել քրիստոնէութեան, ինքը դարձի եկաւ, և ոչ միայն ազատ կրօնք հռչակեց այն, այլ ինքն էլ մկրտուեց իր ամբողջ ժողովրդով: 1700-ամեակը մենք պէտք է կարողանանք տոնել ոչ միայն ազգային շրջանակներում, այլ համաշխարհային քրիստոնէութեան մակարդակի վրայ, որպէսզի մի անգամ ևս համայն քրիստոնէութիւնը, առաւել լաւ ճանաչի մեր ժողովրդին իբրև վաւերական քրիստոնեա ազգութիւն: Հայաստանեայց Եկեղեցի նշանակում է Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Հայաստանում պետական կրօնք հռչակելու 1700-ամեակ: Հայ Եկեղեցի նշանակում է Ս. Սահակ և Ս. Մեսրոպ, հայ տառերի գիւտ և սկզբնաւորում հայ գրականութեան: Հայ Եկեղեցի նշանակում է Վարդան Մամիկոնեան և Աւարայրի ճակատամարտ: Աւարայրի ճակատամարտը համաշխարհային մակարդակի վրայ, առաջին պատերազմն է մղուած խղճի ազատութեան համար, սա կարևոր հանգամանք է: Եկեղեցի Հայաստանեայց նշանակում է Ս. Գրիգոր Նարեկացի և Ներսէս Շնորհալի, մեծագոյն դէմքեր: Թէև շատ արժևորում է հիմայ Գրիգոր Նարեկացին, բայց բաւարար չափով մենք չենք գիտակցում նրա մեծութիւնը: Մի քանի տարի առաջ էր, խօսակցութեան մէջ, Ֆրանսիացի յայտնի լեզուաբան, լատինագէտ Ժան Մահէի հետ, որ հիմայ նաև հայագէտ է, Գրիգոր Նարեկացու մասին արտայայտուելով ասաց՝ «Վեհափառ, ես Եւրոպայի ամբողջ միջնադարեան կրօնական գրականութեան ծանօթ եմ, մեծ հեղինակներ կան, սակայն ոչ մէկը չի հաւասարուի Գրիգոր Նարեկացուն»: Սա նրա վկայութիւնն է: Հայ Եկեղեցի կարող ենք ասել նշանակում է նաև հայ ազատագրական շարժման սկզբնաւորում: Արցախից, Գանձասարից սկիզբ առան առաջին կայծերը ազատագրական գաղափարի: Յիշենք նաև Սարդարապատի ճակատամարտը, որ Էջմիածնի օրհնութեան ներքև տեղի ունեցաւ: Յայտնի է, որ ճակատամարտի նախօրեակին հայերը վստահ չէին, որ պիտի կարողանան հաղթել թշնամուն, երկիրը թշուառ, խեղճ ու կրակ վիճակում էր, գաղթականներով լցուած: Եղեռնից յետոյ: Հրամանատարութեան կողմից մի գնդապետ եկել էր Գևորգ Ե կաթողիկոսին՝ ասելով. «Վեհափառ, վտանգի տակ ենք, Էջմիածինը սահմանի մօտ է, լաւ կը լինէր տեղափոխուէք Սևանայ կողմի, գուցէ թուրքերը հարձակուեն և հասնեն այստեղ»: Գևորգ կաթողիկոսը հրաժարուել է հեռանալ՝ ասելով. «Ո՛չ, ես կը մնամ այստեղ, կը հաւաքուենք բոլորս տաճարում և կ՚աղօթենք հաղթանակի համար, Հայաստանի բոլոր զանգերը հընչեցնել տալով»: Այս լուրը կայծակի արագութեամբ հասել է ֆրոնտ, թէ կաթողիկոսը չի վախենում: Գարեգին Յովսէփեանը անձամբ գնացել է կռուի ճակատ օրհնելու հայ մարտիկներին: Եւ սա հոգեբանական նեցուկ է հանդիսացել, քաջալերանքի, յոյսի, հաղթանակի հաւատքի: Այսպիսով Սարդարապատի հաղթանակում էլ մեր Եկեղեցին՝ Ս. Էջմիածինը, ինչ որ դեր կատարել է: Եւ վերջապէս Հայ Եկեղեցի նշանակում է հայկական ճարտարապետութիւն, մեր փառքը աշխարհի առջև, հայկական մանրանկարչութիւն և հայ աննման հոգևոր երաժշտութիւն: Այս բոլորը Հայ Եկեղեցու շուրջ ստեղծագործուած, միահիւսուած, զարգացել և պայծառակերպուել են դարերի ընթացքում, որով այս օրերին, երբ մեր ողջ ժողովուրդը վերազարթօնքի շրջան է ապրում, մեր հրաւէրը պէտք է լինի լաւ ճանաչել, ուղիղ հասկանալ ու գնահատել Հայաստանեայց Եկեղեցուն և չհեռանալ նրանից: Եր-

22-89

բեմն զարմանքով ու վշտով տեղեկանում ենք, թէ հայ հաւատացեալներ արտասահմանում և նոյնիսկ Հայաստանում, հեռանում են մեր ազգային մայր Եկեղեցուց ու անդամագրւում այլազան կրօնական խմբաւորումների ու դրսից ներմուծուած աղանդների, բաժանումներ ստեղծելով հայ հաւատացեալների ծոցում: Սա անբնական և անցանկալի երևոյթ է: Հաւատացեալը ինչպէ՞ս կարող է հեռանալ մեր մայր Եկեղեցուց:

Մենք մի ազգ ենք և մի Եկեղեցի, անբաժան ու անբաժանելի, հազար եօթ հարիւր տարիներից ի վեր:

Մեր հրաւէրն է ուղղուած մեր ողջ ժողովրդին, մեր հաւատացեալ ժողովրդին ի Հայաստան և ի սփիւռս աշխարհի, որպէսզի նրանք հաստատ, անշարժ մնան Հայաստանեայց Առաքելահաստատ Սուրբ Եկեղեցու՝ Սուրբ Էջմիածնի վէմի վրայ անեղեր, քանզի «ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի». ամէն: